IV ԴԱՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԵՐԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հ. Ժ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մ. թ. IV դ. հայ Արշակունիների պետությունը իր շուրջ երեքդարյա գոյության ընթացքում տակավին պահպանում էր հին, նախաֆեոդալական շրջանի կառավարման որոշ ձևեր, որոնք ժառանգված էին Արտաշիսյանների ստրկատիրական պետությունից, մինչդեռ վերոհիշյալ ժամանակաշրջանում Հայաստանն արդեն թևակոխել էր վաղ ֆեոդալիզմի դարաշրջանը։ Այսպիսով, Հայաստանում կառավարող դինաստիայի վարչարարության ձևերի և երկրի ներքին կացութաձևի միջև առաջացել էր անհամամասնություն, հակասություն, որը գնալով խորանում էր։ Այդ հակասությունը բացահայտելու համար պետք է դիտարկել Արշակունի արքաների՝ հայկական հասարակության իշխող խավի երկու կարևորագույն ներկայացուցիչների՝ նախարարության և հոգևորականության նկատմամբ իրականացվող քաղաքականությունը։

Եթե Տրդատ Գ-ի օրոք «թագավոր-նախարարներ» հակասությունները տակավին հետագայի սրությանը չէին հասել, ապա հենց նրա հաջորդի՝ Խոսրով Գ-ի իշխանության սկզբին դրանք սուր բնույթ ստացան։ Խոսրովի գահակալության առաջին օրերին Հայաստանում երկպառակտչական կռիվ ըսկըսվեց երկու նախարարական տների՝ Մանավազյանների և Որդունիների միջև[1]։ Մեզ այստեղ հետաքրքրողը ոչ թե նրանց պայքարի պատճառների պարզաբանումն է, այլ ֆեոդալական հարաբերությունների տեսանկյունից գնահատելը։ Այս կապակցությամբ Հ. Մանանդյանը իրավացիորեն գրում է. «...որ նախարարությունները, լինելով կենտրոնական իշխանությունից գրեթե անկախ, ըստ երևույթին, մասնավոր պատերազմների վարումը համարել են իրենց օրինական իրավունքը, իսկ թագավորական իշխանությունը համարել են «մարտ պատերազմի առանց իրաւանց»։ Մասնավոր կռվի հենց նույն իրավունքը, ինչպես հայտնի է, իրենց արտոնությունն են համարել ֆեոդալական իշխանությունները նաև միջնադարյան Եվրոպայում ու Անգլիայում ...»[2]։ Ինչպես տեսնում ենք, թագավորը, որն իր Արշակունի նախնիների երկար շարքի, և նրանց նախորդած Արտաշիսյանների օրինակով սովոր էր հլուհնազանդ տեսնելու իր հպատակներին և իր անմիջական շրջապատը՝ ավագանու ներկայացուցիչներին, ամենևին հակված չէր ճանաչելու ֆեոդալական-նախարարական տների իրավունքը՝ ինքնուրույն լուծելու իրենց միջև ծագող վեճերը։ Դրան հակառակ, նախարարական տները ֆեոդալական հարաբերությունների զարգացմանը համընթաց, իրենց ավելի ու ավելի անկախ էին ըզգում, de facto լայնացնում էին իրենց իրավասության շրջանակները։ Բնական է, որ այդ երկու քաղաքական ուժերի ընդհարումները գնալով պիտի ուժեղանային։

Նշված իրողությանը ավելանում են ուրիշները։ Կենտրոնական իշխանության դեմ հաջորդաբար ապստամբում է Պարսկաստանին հարում Բզնունյաց Դատաբե նահապետը և Աղձնյաց Բակուր բդեշխը[3]։ Նրանց ապստամբու-

---

1 Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1912, Գ, Դ (այսուհետև՝ Փավստոս, համապատասխան գրքությունն ու գլուխը)։

2 Հ. Մանանդյան. Ֆեոդալիզմը հին Հայաստանում (Արշակունիների և մարզպանության շրջան), Երևան, 1934, էջ 269—270։

3 Տե՛ս Փավստոս, Գ, Ը, Թ, Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխատութեամբ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Տփղիս, 1913, գիրք Գ, գլ. Բ, Դ (այսուհետև՝ Խորենացի, համապատասխան գիրքը և գլուխը)։

թյունները ճնշելուց հետո, ինչպես վկայում է Փավստոսը, Խոսրով Գ-ն կարգադրել է սերհատել վերոհիշյալ տոհմերը և իրեն ապահովագրելու համար հրամայել է «...զի մեծամեծ աւագանին, նախարարքն աշխարհակալքն աշխարհատեարքն՝ որ էին բիւրաւորքն և հազարաւորքն, կայցեն առ արքային, և ընդ նմա շրջեսցին, և մի ոք երթիցէ ի նոցանէ ընդ զօրս արքունի»[4]։ Սա ես նախաֆեոդալական դարաշրջանի հասարակարգի կառավարման ձևերի մնացորդ էր, երբ թագավորը իսկապես անսահմանափակ իշխանություն ուներ։ Այն իր բնույթով հիշեցնում է Տիգրան Բ-ի կողմից հայ ավագանուն նորաստեղծ Տիգրանակերտում բռնի բնակեցնելու օրինակը, երբ անհնազանդներին սպառնում էր ունեցվածքի բռնագրավումը[5]։ Նոր պայմաններում նմանօրինակ գործողությունները ժամանակավրեպ էին, ուստի և անօգուտ։ Դրանք միայն խորացնում էին նախարարության և թագավորի միջև եղած վիհը։ Նախարարների անհնազանդությունը և ապստամբությունները, ինչպես հայտնի է, դրանով ամենևին չկասեցվեցին։

Հետագայում, մինչև Մանվելի կառավարումը (378 թ.) այս կարգի ելույթները Արշակունյաց Հայաստանում ստանալու էին հարատև բնույթ[6]։ Այս երևույթը, որը Գ. Սարգսյանը իրավացիորեն բնորոշել է որպես քաղաքացիական պատերազմ թագավորի և նախարարության միջև[7], կարմիր թելի պես անցնում է Խորենացու և Փավստոսի «Հայոց պատմություններում»։

Հաջորդ՝ մեզ հետաքրքրող վկայությունը, որը պատկանում է Խորենացուն և Փավստոսին, վերաբերում է Արշակավանի հիմնադրման խնդրին, որը իրականացվում էր հելլենիստական աշխարհին հատուկ (մ. թ. IV դ. իրականությանն անհարիր) ձևերով։ Դրանով նա, ըստ էության, հնարավորություն էր ընձեռում երկրի բնակչության ստորին խավերի ներկայացուցիչներին՝ փախչել իրենց տերերի մոտից և վերաբնակվել Արշակավանում, մինչդեռ ֆեոդալիզմի բնորոշ գիծը գյուղացու ճորտացումն էր ֆեոդալի կողմից, նրա ամրակցումը հողի ինչ-որ սահմանափակ տարածքին (հավանաբար այս պրոցեսը Հայաստանում երբեք իր գագաթնակետին չի հասել, ինչպես մի շարք այլ երկրներում, սակայն մեր խոսքն այստեղ զարգացման տենդենցների մասին է)։ Բոլոր դեպքերում Արշակը կատարում էր զարգացող ֆեոդալական հարաբերություններին ծայրահեղ հակառակ մի քայլ, որը ֆեոդալների կողմից ընդունվեց բացահայտ թշնամությամբ և ծայրեծայր ձախողվեց։ Այդօրինակ քաղաքները, ինչպես նշում է Գ. Սարգսյանը, «...IV դարում արդեն ապրել էին իրենց ժամանակը և հետագա գոյության հեռանկարներ չունեին զարգացող ֆեոդալիզմի պայմաններում»[8]։ Խորենացին և Փավստոսը չեն հիշատակում մի որևէ նախարարի (պարսկասեր կամ հռոմեասեր), որը հակառակվեր Արշակավանը կործանելու մտադրությանը։ Նրանք այս խնդրում հանդես եկան անօրինակ միասնությամբ։ Այնուհետև, բնորոշ է, որ Արշակավանի կապակցությամբ նախարարները օգնություն են խնդրել Շապուհից և ոչ կայսրից, որը ստրկատիրական Հռոմի ներկայացուցիչն էր, մինչդեռ IV դ. Արշակունյաց Հայաստանն իր սոցիալ-տնտեսական զարգացմամբ ավելի շատ մոտեցել էր ֆեոդալիզմին՝ ի տարբերություն ստրկատիրության պատվար Հռոմեական կայսրության և շատ ավելի մոտ էր կանգնած Սասանյան Պարսկաստանին։

Քաղաքաշինության վերաբերյալ մի երկրորդ վկայություն ունի Փավստոսը։ Նա գրում է. «Խորհէր (Մուշեղ Մամիկոնյանը—Հ. Հ.) ևս ընդ իշխանսն

---

4 Փավստոս, Գ, Ը։

5 Տե՛ս Appiani Alexandrini. Ilisioria Romana. Lipsiae, 1879, Mithr, 84.

6 Փավստոս, Գ, ԺԸ, Դ, ԺԹ, Ե, Ը—ԺԹ և այլն, Խորենացի, Գ, ԺԸ, ԻԹ, ԼԱ։

7 Г. Х. Саркисян. Тигранакерт. Из истории древнеармянских городских общин, М., 1960, с. 141.

8 Գ. Խ. Սարգսյան, Հին Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման ուղիների մասին, Երևան, 1962, էջ 61։

ցունաց, և նոքօք ընդ կայսերն, թէ պարտ է նոցա քաղաք մի շինել յերկրին Հայոց. ի մի մի գաւառսն, որ մին մի քաղաքս, որ երկուս երկուս ամուր պարսպաւորս զօրանիստս հաստատել ընդ ամենայն երկրին Հայոց. մինչև ի Գանձակ սահման երկրին, որ Պարսից կուսէ էր, ...»[9]։ Այս ծրագիրը նախապես արժանացել էր Վարազդատ թագավորի հավանությանը։ Վերոհիշյալ ծրագրի իրականացումը հետապնդում էր այսպիսի նպատակներ. առաջին՝ Քառամյա պատերազմի ժամանակ (364—368 թթ.) կործանված քաղաքների, որոնց բացակայությունը խստորեն զգացնել էր տալիս, վերականգնումով կրկին կամրապնդվեր Արշակունիների իշխանությունը Հայաստանում, կվերականգնվեր նրանց նախկին ուժն ու հեղինակությունը։ Քաղաքները Վարազդատի համար կվերածվեին հենարանի։ Սա թագավորին հնարավորություն կտար պայքարելու ինչպես ներքին կենտրոնախույս ուժերի (նախարարների), այնպես էլ Սասանյան Պարսկաստանի ոտնձգությունների դեմ։ Քաղաքները պետք է վերականգնվեին և կառուցվեին Հայաստանի հարավային շրջաններում՝ այս կերպ ապահովելով Արշակունիների պետության անվտանգությունը Սասանյանների ոտնձգություններից։ Քաղաքները, ըստ ծրագրի, լինելու էին պարսպապատ և զորանիստ էին հանդիսանալու հայ-հռոմեական զորքերի համար։ Սակայն, շուտով Մուշեղը Բատ Սահառունու թելադրանքով և նույն Վարազդատի համաձայնությամբ սպանվում է[10]։ Թվում է, թե Վարազդատը չպետք է թույլ տար Մուշեղի սպանությունը, քանի որ նրա ծրագիրը իր իշխանության ամրապնդումն էր հետապնդում։ Սակայն այստեղ դեր խաղաց այն հանգամանքը, որ նրա առաջարկությունների մեջ չափազանց մեծ տեղ էր տրվում հռոմեացիների մասնակցությանը, որը անընդունելի էր ոչ միայն ավագանու, այլ նաև թագավորի համար։

Այժմ անդրադառնանք Արշակունիներ-եկեղեցի փոխհարաբերության հարցի պարզաբանմանը։ Ն. Ադոնցը գրում է. «Եկեղեցու ազգայնացումը համազոր էր նրա նախաբարականացման կամ ֆեոդալականացման, որովհետև քաղաքական վարչակարգը Հայաստանում ուներ ֆեոդալական բնույթ, և իշխանությունը բաժանված էր բազմաթիվ իշխանական տոհմերի մեջ, բնականաբար, նաև եկեղեցական իշխանությունը պետք է համակերպվեր ներգործող միջավայրին և ընդուներ նույն միջավայրի պատրաստի ձևերը»[11]։ Այսպիսով, եկեղեցին ևս հանդես էր գալիս որպես ֆեոդալ։ Ինչպես հայտնի է, Արշակունիների վերաբերմունքը եկեղեցու նկատմամբ երկակի բնույթ էր կրում։ Նրանք ընդունում էին եկեղեցին որպես երկրի քաղաքական կենտրոնացմանը սատարողի և հենվում նրա վրա, սակայն պայքարում էին նրա դեմ որպես խոշորագույն ֆեոդալի, որը շատ դեպքերում միավորվում էր նախարարական կենտրոնախույս շարժումների հետ։ Եթե եկեղեցին ֆեոդալ էր, ապա, բնականաբար, պետք է ունենար իր հողային սեփականությունը։ Ըստ Փավստոսի, Արշակ Բ-ի օրոք նրա ձեռքում էր գտնվում 15 գավառ[12]։ Եկեղեցու նկատմամբ Արշակունիների վերաբերմունքի նշված երկու կողմերից վերջինի մասին նրանց անունից խոսում է Հայր Մարդպետը։ Փավստոսը գրում է. «Զիարդ, ասէ, զայսպիսի տեղիս կանանցահանդերձ մարդկան տուեալ է, և ոչ արանց։ ....Եթէ զայս տեղիս ի բաց քակեմք, զի աստ պարտ է շինել զապարանս արքունի»[13]։ Այնուհետև Պապը գյուղական հոգևորականությանը զրկեց տնտեսական պատվանդանից, նրանից ետ վերցնելով յոթական հողերից հինգականը, տասնորդ հարկ նշանակեց նրանց վրա։ Նա միաժամանակ իր մյուս

---

9 Փավստոս, Ե, ԼԴ։

10 Նույն տեղում, Ե, ԼԴ։

11 Ն. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 401, Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Երևան, 1978, Երկեր, հ. Բ, էջ 355։

12 Տե՛ս Փավստոս, Դ, ԺԴ։

13 Նույն տեղում։

բարենորոգումներով կտրուկ սահմանափակեց եկեղեցու իրավունքները, որ գոյություն ունեին Ներսես Մեծից սկսած[14]։ Եկեղեցին, որպես ֆեոդալ, անկասկած, չէր կարող հանդուրժել Պապի այս ձեռնարկումները։ Արշակունիներ-եկեղեցի լարված փոխհարաբերությունների մասին է խոսում նաև այն, որ IV դ. մի շարք կաթողիկոսներ և հոգևորականներ դարձան հայոց արքաների զոհերը։ Նույնը Արշակունիները կատարում էին նախարարությունների նկատմամբ, երբ ոչնչացնում էին ամբողջական տոհմեր։

Այս և նմանօրինակ դեպքերում Հայաստանում կառավարող Արշակունիները հանդես էին գալիս որպես նախաֆեոդալական քաղաքական վերնաշենքի վերապրուկների ջատագովներ։ Արշակունիների տեղատվությունը IV դ. և ի վերջո անկումը V դ. սկզբներին (428 թ.), բացի արտաքին ծայրահեղ անբարենպաստ քաղաքական պայմաններից, Հռոմի և Պարսկաստանի՝ Հայաստանի շուրջ ծավալած պայքարից, իրենց հիմքում ունեին նաև խորը ներքին պատճառներ, որոնք ծագում էին երկրի ֆեոդալականացման օբյեկտիվ պրոցեսից և Արշակունիների՝ նրան էապես համակերպվելու անընդունակությունից։

IV դ. ընթացքում գնալով թուլանում էր Արշակունիների սոցիալական հիմքը երկրի ներսում։ Արագորեն նվազում էր նրանց սատարող նախարարությունների թիվը։ Մարդպետները և սպարապետները բավարար ուժ չէին կարող լինել, որպեսզի Արշակունիների իշխանությունը մնար անսասան։ Թուլանում էր արքունի, նրանց մշտապես օգնող սպարապետների ղեկավարած զորքը։ Անկում ապրեցին հայկական քաղաքները՝ կենտրոնական իշխանության մշտական հենարանները։ Այսպիսով, ներքին և արտաքին պատճառները հանգեցրին հայկական միասնական պետության անկմանը։

Հարց է ծագում, չկա՞ր արդյոք Հայաստանի պետական շրջաններում մի այնպիսի հոսանք, որը այլընտրանք էր առաջարկում Արշակունիների այդօրինակ քաղաքականությանը։ Այդպիսի հոսանքի ներկայացուցիչ է համարվում Մանվել Մամիկոնյանը։

378 թ. պարսկական գերությունից Հայաստան վերադառնալուց հետո Մանվելը գահընկեց է անում Վարազդատ թագավորին (374—378 թթ.), որից հետո երկրի թագավոր է նշանակում Պապի մանկահասակ որդուն՝ Արշակ Գ-ին (378—389 թթ.) իր իսկ խնամակալության ներքո (մինչև իր մահը՝ 385 թ.)։ Արշակ Գ-ին գահակից է հռչակվում նրա կրտսեր եղբայրը՝ Վաղարշակը։ Պապի այրին՝ Զարմանդուխտը, Մանվել Մամիկոնյանի հետ միասին խնամակալում էր երկու թագավորներին։ Իրականում իշխանությունը ամբողջությամբ պատկանում էր Մանվելին, որի մասին քանիցս հիշատակում է Փավստոսը[15]։

Մանվելի իշխանության տարիներին Հայաստանի ներքին կյանքը անցավ հանգիստ և խաղաղ, առանց մակընթացությունների և տեղատվությունների։ Երկրի ներքին քաղաքականության մեջ դա պայմանավորված էր Մանվելի՝ նախարարների հանդեպ ցուցաբերած ճկուն քաղաքականությամբ։ Արշակունյաց Հայաստանը, որը մինչև Մանվելը (330—378 թթ.) նախարարական անվերջ շարժումների և ելույթների ասպարեզ էր, խաղաղվեց։

Փավստոսը Մանվելի կառավարման տարիներին չի հիշատակում կենտրոնական իշխանության դեմ ապստամբող որևէ նախարարի։ Դա, թերևս, հետևանք էր նաև այն հանգամանքի, որ Մանվելը երկար տարիներ ապրել էր Սասանյան Պարսկաստանում և քաջատեղյակ էր կառավարման ֆեոդալական առանձնահատկություններին[16]։ Փավստոսը Մանվելի յոթնամյա իշխանության մասին գրում է. «Մեծաւ իմաստութեամբ և բազում յաջողութեամբ աշխար-

---

14 Նույն տեղում, Ն, ՀԱ։

15 Նույն տեղում, Ե, ՀԷ, ՀԸ, ԽԲ։

16 Պարսկաստանում ֆեոդալիզմի զարգացման մասին տե՛ս М. М. Дьяконов, Очерк истории древнего Ирана, М., 1961, с. 280.

հին Հայոց մեծապէս առաջնորդէր, որչափ եկաց ժամանակս»[17] կամ «Եւ ամենայն երկիրն Հայոց ի խաղաղութեան ընդ հովանեաւն Մանուելի զամենայն աւուրս կենաց նորա»[18]։

IV դ. վերջերին հայ նախարարությանը անհրաժեշտ էր մի այնպիսի առաջնորդ, որը չէր հակադրվի Հայաստանում տնտեսական ու քաղաքական հարաբերությունների զարգացման բնական ուղուն։ Քաղաքական իրադարձությունների ընթացքը ցույց տվեց, որ Արշակունիները չկարողացան այդ դերը ստանձնել, նրանց շահերը չափազանց սուր էին բախվում նախարարների շահերի հետ։

Մանվելը, որը Մամիկոնյանների խոշոր ֆեոդալական տոհմի ներկայացուցիչն էր, իր ներքին քաղաքականության մեջ արտահայտում էր հայկական ֆեոդալական ավագանու շահերը։ Նա կարողացավ ըմբռնել ժամանակի ոգին՝ ֆեոդալական Հայաստանում կառավարման նոր ձևը տարածելու շնորհիվ։ Այս պատճառով էլ Մանվելի՝ Հայաստանը կառավարելու հանգամանքը նախարարության կողմից ընդունվեց բարյացակամորեն։ Յավոք Մանվելի կառավարման ժամանակաշրջանի մասին մեր ունեցած տեղեկությունները շատ սուղ են և թույլ չեն տալիս մանրամասն քննել առաջադրված խնդիրը։

Գալով Մանվելի և հայ եկեղեցու միջև ստեղծված հարաբերություններին, պետք է նշել, որ դժբախտաբար այս կապակցությամբ ևս Փավստոսի վկայությունները չափազանց կցկտուր են։ Իր եզակի վկայության մեջ նա գրում է. «...և բաղում մասունս յընչից իւրոց տայր յեկեղեցիս և ի վկայանոցս, և բաղում գանձս տայր ցքահանայապետսն. և ապա ինքն մեռանէր»[19]։ Այստեղ պատմիչի խոսքը վերաբերում է Մանվելի՝ մեռնելուց առաջ իր հոգու փրկության համար աղքատներին և եկեղեցականներին տված բաժիններին։ Հիմնվելով այս միակ վկայության վրա, կարելի է ենթադրել, որ եթե Մանվելը հոգևորականությանը բաժին է հանել իր ունեցվածքից, ապա նա նույնը կարող էր արած լինել նաև պետության հաշվին։ Պետք է եզրակացնել, որ Մանվելի օրոք եկեղեցին որոշ չափով ձերբազատվել է Պապի կողմից իր վրա դրված սահմանափակումներից։ Դա նպաստել է եկեղեցու՝ Մանվելի նկատմամբ բարյացակամորեն տրամադրվելուն։ Եկեղեցու վերականգնված հեղինակության մասին է խոսում նաև այն, թե հետագայում ինչպիսի մեծ դեր ունեցավ Հայաստանում Սահակ Պարթևը իր կաթողիկոսության ժամանակաշրջանում։

Այսպիսով՝ Հայաստանի ներքին կյանքում որոշակի փոփոխություն մտցվեց Մանվել Մամիկոնյանի ժամանակ, երբ նա Հայաստանի կառավարիչն էր։ Նա կարողացավ ճիշտ գնահատել ոչ միայն Հայաստանի ներքին իրավիճակը, այլև IV դ. վերջին քառորդին տիրող միջազգային կացությունը։ Ներքին իրավիճակ ասելով հասկանում ենք ֆեոդալիզմի բուռն առաջընթացը, որը հանգեցնում էր հայ նախարարության ավելի ու ավելի ինքնուրույնացմանը։ Արշակունիները ողջ IV դ. ընթացքում հանդես չբերեցին անհրաժեշտ ճկունություն՝ կարծրացած պետական ապարատը նոր պայմաններին հարմարեցնելու ուղղությամբ, որը, թերևս, կարող էր հանգեցնել միասնական պետության հարատևմանը, ինչպես եղավ հարևան Վրաստանում։ Մյուս կողմից, բավարար լայնախոհություն դրսևորելով Սասանյանների հետ ունեցած հարաբերություններում, Մանվելը փաստորեն Հայաստանը զերծ պահեց պարսկա-հռոմեական երկարատև հակադրության կռվախնձորը լինելուց։ Սակայն արդեն ուշ էր, որպեսզի Մանվելի որդեգրած քաղաքականությունը էական պտուղներ տար։ 387 թ. Արշակունյաց Հայաստանը բաժանվեց երկու տերությունների միջև, ըստ որում, երկրի մեծ մասը՝ 4/5-ը անցավ Սասանյան Պարսկաստանին, իսկ փոքրագույնը՝ 1/5-ը Հռոմեական կայսրության իշխանությանը։

---

17 Փավստոս, Ե, ԼԷ։

18 Նույն տեղում, Ե, ԽԲ։

19 Նույն տեղում, Ե, ԽԴ։

О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ ФОРМ ГОСУДАРСТВЕННОГО ПРАВЛЕНИЯ В АРМЕНИИ В IV ВЕКЕ

А. Ж. АРУТЮНЯН

Резюме

В IV в. н. э. Аршакидская Армения уже переживала стадию развития раннего феодализма, а между тем в системе государственного правления династии Аршакидов были еще весьма ощутимы пережитки дофеодального государства. Пережитки в политической системе привели к разрыву между царской властью и классом нахараров и церковью, которая была чисто феодальным явлением в социальной структуре армянского общества. В старую политическую систему армянских Аршакидов не вписывалось стремление нового класса нахараров к внутренней самостоятельности.

Альтернативой системе правления Аршакидов являлась внутренняя политика Манвела Мамиконяна, которому удалось заключить союз с нахарарством и временно улучшить внешнеполитическое положение Армянского государства накануне его раздела между Ираном и Римом в 387 году н. э.